

Հ.Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում և զուգադրվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ մարդու բացասական հատկանիշներ արտահայտող դարձվածքների առանձնահատկությունները, բացահայտվում նշված լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրություններն ու տարբերությունները:

Առանցքային բառեր. դարձվածք, բացասական հատկանիշ, առանձնահատկություն, լեզվամտածողություն:

Դարձվածքները ժողովրդի «իմաստության գանձարանն» է, որը սերնդեսերունդ պահպանում և վերարտադրում է նրա մտածողության և մշակույթի առանձնահատկությունները: Լեզվական այս միավորներն առաջանում են մարդու աշխարհաճանաչողության և գործունեության համեմատաբար բարձր մակարդակում՝ պայմանավորված հասարակական գիտակցմամբ և ընկալմամբ: Իրերի և երևույթների ճանաչումը և վերլուծությունը, նրանց առավել կարևոր կողմերի բացահայտումը հիմք են հանդիսանում բառակապակցության արտահայտած հասկացությունների վերաիմաստավորման համար, ինչի արդյունքում կապակցությունը տեղափոխվում է իմաստային մեկ այլ դաշտ [1]:

Լեզվաբանության մեջ իմաստային դաշտը տարբեր խոսքի մասերին պատկանող, սակայն մեկ հասկացություն արտահայտող բառերի ամբողջություն է: Քանի որ միևնույն հասկացությունը կարող է մի դեպքում արտահայտվել բառերով, մյուս դեպքում՝ դարձվածքներով, ապա վերջիններս ևս կարող են կազմել իմաստային դաշտեր ըստ իրենց բաղադրիչների արտահայտած ընդհանուր իմաստի՝ անկախ իրենց քերականական, կառուցվածքային, ոճական և այլ առանձնահատկություններից [2]:

Դիտարկվում և զուգադրվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ մարդու բացասական հատկանիշներ արտահայտող դարձվածային միավորների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները, բացահայտվում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Հարկ է նշել, որ այս դաշտը մաս է կազմում մի ավելի մեծ՝ ընդհանրապես մարդու հատկանիշներ արտահայտող իմաստային դաշտի: Նշված լեզուների դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը նպաստում է այդ լեզուները կրող ժողովուրդների աշխարհընկալման բացահայտմանը:

Ուսումնասիրությունը կատարվել է մարդու մարմնի անուններ պարունակող դարձվածքների ոլորտում: Բերենք մարդու բացասական հատկանիշներ արտահայտող մի քանի դարձվածք հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Ճնճղուկի/հավի սիրտ/լեղի - Վախկոտ, երկչոտ: *Երևում է, - Դու տղամարդ չես, ճնճղուկի սիրտ ունես: Բերանը պատռած* - Սանձարձակ, պոռոտախոս: *Բերանը պատռած մարդիկ են, մի խոսքով ասես՝ հարյուրը կթափեն գլխիդ* [3, 120]: **Բերանը թույլ** - Անզաղտնապահ: *Միրիճան աղային աղջկանն ալ ըսելու չէ, թուլբերան աղջիկ մն է* [4, 32]: **Մեծ բերան** - Գոռոզ, ամբարտավան, պոռոտախոս: *Ապա խոսեց միջնակ տղեն, նույնպես գոռոզ – մեծ բերան* [5, IV, 89]: **Գլուխը դատարկ** - Հիմար, տգետ, անհասկացող: *Բայց մի մադամ Ջիվարոզին հարյուրներով աղջիկ կհանձնեն, թեև նրա ուսումնարանում աղջիկները մտնում և դուրս են գալիս դատարկ գլխով* [6, III, 148]: **Գլուխ գովող** - Պարծենկոտ, գոռոզ: *Ռուբենը լավ գիտեր, որ Ավետը թեև հպարտ ու գլուխ գովող, բայց իր շահի հետևից ընկած մարդ է* [7, 276]: **Գլխին լաչակ ծածկել/լինել/կապել** - Կանացի հատկություններ ունենալ, վախկոտ, թույլ լինել: *Ընկերները նրան կանվանեին վախկոտ աղջիկ, կասեին «փափախող հան, գլխիդ լաչակ կապիր»* [8, 168]: **Տափակ գլուխ (անարգ.)** - Հիմար, անճաշակ: *Անցնում են տարիներ, անգույն, գոյության տարիներ, որ տափակ գլուխներն անվանում են խաղաղ ընտանեկան կյանք* [9, 359]: **Գլխում խելքի կտոր չլինել/չունենալ** - Հիմար լինել: **Գլխին նստել** - Երես առնել, լափրշանալ: *-Եկել են գլխներին նստել, մեր ջուրը մեզ խնայում են,- բարկացավ Մարկոսը* [10, 133]: **Աչքի գրող** - Անհանդուրժելի անձ: *-Թե որ էդքան խելքամաղ ես էլու, ընչի՞ չես դու առնում նրան, հագիր ինձ էլ միանգամից կազատես իմ աչքի գրողիցը* [11, 138]: **Աչքի սուրմա թոցնող** - Գող, ավազակ: *Մեր զայում լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի սուրմա թոցնող* [11, 29]: **Աչքը ծակ** - Ազահ: *Հողեղեն ենք, աչքներս ծակ կլինի, աշխարհքս քաղցր է* [3, 43]: **Աչքը դուրս(ը)** - Ամուսնական կյանքին անհավատարիմ: *Եվ տանտիրոջը՝ թե չի վռնդում, Նրան թողնում՝ կնոջ հետ մենակ, Աչքը դուրս կնոջ, Որ շատ է սիրում արցունքով զինվել* [12, I, 421]: **Չար աչք** - Նախանձ մարդ, հայացք, որ դժբախտություն է բերում: *-Դո՛ւք, պարոններ, չար աչքով զարկեցիք իմ բախտավորությանը,- պատասխանես Դիաշկովը բարկությամբ* [6, III, 186]: **Սիրտը քարանալ/քար կտրել** - Անգույթ, անխիղճ դառնալ: *Ահա այսքան գեղեցիկ, այսքան բարի ու այսքան սիրելի էր Արևհալը, բայց ինչ կանես, որ խորթ մոր սիրտը քարացել էր* [13, 390]: **Սիրտը ժանտ** - Դաժան, անգույթ լինել: *Միևնույն է, թե հիմա որտեղ ես մաշում Քո կոշիկները նրբին և քո սիրտը ժանտ* [12, I, 224]: **Սիրտը չար** - Չարագործ, նախանձ: *Ասա՛ էն գիշակեր գազանի սիրտը չար ա իմ տան վրա* [11, 273]: **Սիրտը փակ** - Անարձագանք,

անսեր: Մարդկանց սրտերը փակ են ինձ համար եվ նրանց հոգին ծայնըս չի լսում [14, 41]: **Ձեռքը փակ** - Ժլատ: *Ես կանչում եմ նաև նրանց՝ Այդ ձեռքը փակ ժլափներին* [12, I, 424]: **Ձեռները/ձեռքերը ծալել (նստել)** - Պարապ լինել, ոչնչով չզբաղվել: *Այնինչ խորթ մերն ու իր աղջիկները իրենց ներսի չարությունից հալվում են, մաշվում, թեև ամբողջ օրը ձեռները ծալած, աղջիկ-սարոնների նման փանը նստած են լինում* [5, V, 302]: **Ձեռքից քաշ/քարշ** - Գող, խարդախ: *Ձեռքից քաշ է, մի բան կթոցնի* [3, 391]: **Երես առնել** - Իր չափը կորցնել, աներես, լաիրշ, լկտի դառնալ: *-Իհարկե, այնքան ազատություն եք տվել, որ երես է առել* [9, 326]: **Երեսը պատռած** - Շատ համարձակ, լկտի, լաիրշ, անամոթ, անպատկառ: *Էդ թավուր երեսը պատռած փեսեն ի՞նչ փուն թողալու յա* [11, 112]: **Երես տալ** - Սիրելով՝ սանձարձակ, քմահաճ դարձնել: *Քո մեղքը հենց էնքան էր, որ ինձ պես անպիտան աղջկանն երես տվիր ու սիրեցիր* [11, 318]: **Շան երես ունենալ (զոհկ.)** - Ամոթ, պատկառանք չունենալ: *Քնից վեր էր կենում ու՛ դեռ էստեղ ե՞ս, շան երես ունես, շան* [15, 486]: **Բախտից երես առած** - Հղիացած, շփացած: *Ո՞ւմ մասին եմ մտածում,- մի Ադելինայի, բախտից երես առած մի կենցաղասեր աղջկա* [3, 102]: **Երեսին մեռոն չկա/երեսի մեռոնը գնալ/թափվել** - 1. Անհավատ, ստախոս մարդ է: 2. Ամոթ ու խիղճ չունի: *-Սուս, անամոթ, դու մեռոն չունիս երեսիդ վրա* [9, 422]: **Քիթը երկինք տնկել/ցցել** - Գոռոզամտանալ: *Ազնիվը նայում էր նրա խղճուկ դեմքին ու դժվարանում հավատալ, որ իր առաջ կանգնած է երբեմնի քիթը երկինք ցցած Մանվելը* [7, 493]: **Քիթը վեր/բարձր** - Գոռոզ, մեծամիտ: *Խելքի ծով է, քայլում է նա՛ ուռած-փքված, քիթը վեր, Ամբողջ ազգին չի հավանում* [14, I, 58]: **Տուռ քիթ** - Խորամանկ, տակետակ: *Է՛յ, ծուռ քիթ, էլի ի՞նչ ունես էս կողմերը* [3, 308]: **Լեզվի տակ օձի/իժի թույն լինել** - Չար լեզու ունենալ, կեղծավոր լինել: *Հեռու կացեք էդ մարդիցը, նրա լեզվի փակին իժի թույն կա* [11, 272]: **Չար լեզու/լեզուն չար** - Դաժան, խայթող լեզու, չարությամբ խոսող: *Նա անհանգստությամբ սպասում էր, որ մեկն ու մեկի չար լեզուն կտա նրա անունը* [8, 48]: **Լեզուն երկար** - Ըմբոստ, մեծախոս: *-Լեզուն երկար է երևում,- նկատեց Մասիսյանը* [6, III, 233]: **Սատանի լեզու ունենալ** - Շողոքորթ: *Դու նրան լեզվով չես հաղթի: Նա սատանի լեզու ունի:* **ՈՒղ-տի/էշի/իշի ականջում/քնել** - Անտեղյակ: *-Իսկ դուք ուղտի ականջում քնե՛լ էիք,- վեր նայելով հարցրեց հանգիստ Գադիշոն* [10, 568]: **Ինչ որ քո ոտը գիտե, այն մեր գլուխը չգիտե** (հեգն.) - Շատ խելքն ես, մեք ի՞նչ ենք քո համեմատությամբ: *-Ի՞նչ ասեմ, աղա, դու ես իմանում. ինչ որ քո ոտը գիտե, այն մեր գլուխը չգիտե* [6, III, 225]: **Աղ ու հացը ոտի տակ տալ** - Ապերախտ լինել: *նա էլ է մոռանում մեր փնում կերած աղ ու հացը* [3, 15]: **Կաշին հաստ** - Խիստ աներես: *Ի՞նչպես կրնամ ըսել, թե զինքը խաբած եմ և բոլոր ըսածներս սուր էին*

... շիրակը շար հասար կաշի մը ունենալու է արոր համար [4, 609]: **Եղունգին չարժենալ (մեկի)** - Անարժան լինել: *Ինձ համար այդ բոլորը Սուսանի մի եզունքին չարժեն* [9, 531]: **Անկուշտ փոր** - Անհագ, շատակեր մարդ: *Թե որ ձեր անկուշտ փորը չի մտնում էսքան փողը, ո՞ր ա գնում* [11, 168]: **Ճակատը պինդ** - Պնդերես, աներես, անամոթ: **Արյուն խմող** - Արյունոտ, արյունախում: *Պիսիրը Հարությունի աչքում է՛լ ավելի ընկավ, դարձավ գեղի վար մարդը, գեղի արյուն խմողը* [16, 38]: **Մազը կտրած** - Անամոթ, անպարկեշտ: *-Ո՞ր կորար, Ան՛ուշ, ա՛յ մազդ կտրած* [5, III, 86]: **Հավկիթի/ձվի մեջ մազ փնտրել** - Խիստ բժախնդիր, չիավան լինել: *Իսկ այս տիպը, հապա տեսեք, Ձվի մեջ էլ մազ է փնտրում* [12, I, 263]: **Փորը լիքը սատանա** - Սաստիկ խորամանկ, խարդախ: *Երեսից համեստ է երևում, բայց փորը լիքը սատանա է: Սար ու ձոր, տերտերի փոր* - Տերտերներն ակուշտ ու ազահ են: *Սար ու ձոր, տերտերի փոր, ի՞նչ ղորդ են ասել է* [17, 21]: **Ծնտը թույլ** - Շատախոս: **Ոսկոր մտող (բրբ.)** - Շատ ժլատ: *Այնքան աչքածակ է ու ոսկոր մտող, որ ոչնչի համար չի ուզում փող ծախսել:* **Փորում օձեր լինել/փորը օձերով լիքը լինել** - Չարանենգ մարդ լինել: *Սարանան գիրի նրա խորհուրդը, ո՞վ գիրե, թե ինչ օձեր նստած կան նրա փորում* [3, 584]: **Пустая голова/башка** - Հիմար անձ: □ *Молчи пустая голова! Слышал я истину, бывало* [18, 71]. **Без царя в голове** - Շատ հիմար, անհեռա-տես: *Хлестаков, молодой человек, лет двадцати трех, тоненький, худенький, несколько приглуповат, и как говорят, без царя в голове* [19, 6]. **Голова соломой набита** - Հիմար, ոչ հնարամիտ: *А недавно я к куму ездил... Язык у него как щеколда, в любую сторону крутится, но голова не соломой набита* [20, 125]. **Черный глаз** - Վատ, չար, անբարյազակամ հայացք (անձ): **Нет стыда в глазах** - Մեկն անօրեն է, անազնիվ, անխիղճ, անամոթ: **У него нет сердца** - Միրտ չունի, անգութ է: *Я удивляюсь, что она нашла в нем, у него нет сердца, не так ли?* **Сердце обросло мохом** - Մեկը դարձել է անխիղճ, անհոգի: *И скажет сын, что сердце у меня обросло мохом* [21, 101]. **Черные руки** - Հանցագործ ձեռքեր, անձ: **Дырявые ручки** - Ան շ ն ո ռ ի ք մ ար դ : **На руку нечист** - Անազնիվ է: *Лентяй и лодырь отлынивший от работы, и ко всему этому нечистый на руку* [20, 520]. **Поднимать нос** - Գոռոզանալ: *-Да, да, у нее проворовался, ей нечего подымать нос! – кричал Петерсон* [22, I, 127]. **Не видеть дальше своего носа** - Միայն իր շահը տեսնել: *Вы в подразделениях дальше своего носа ничего не видите!* [20, 390]. **Длинный язык** - Չափազանց շտախոտ անձ: *Все побаивались его длинного и грязного языка* [22, 321]. **Слаб на язык** - Շտախոտ է: *Антонна Васильева она прозвала переметной сумой не за то, чтоб он в самом деле был когда-нибудь замечен в*

предательстве, а за то, что был слаб на язык [20, 701]. **Медный лоб** – Համար, բութ անձ: Пустозвоны, фильтрованные дураки, медные лбы, разноцветные попугаи уверяют, что убийство на дуэли – не убийство [22, I, 207]. **As crooked as a dog's hind leg** - Անազնիվ, ոչ օրինավոր: **Turn one's nose up at** - Գոռոզանալ: *They turn their noses up and look down on them.* **A thick-headed thing** - Անհասկացող, հաստագլուխ մարդ: *Oh, Tom, you poor thick-headed thing!* [23, 26]. **An empty head/empty-headed** - Հիմար: *She really blamed her empty-headed, neighbour.* **Soft/touched in the head** - Հիմարավուն, անխելք: *He is a little touched in the head. I can't understand his behaviour.* **A wicked heart/black heart** - Չարագործ: *I wouldn't trust them as far as I could see them – a pretty face may cover a wicked heart* [24, 92]. **A heart of stone** - Դաժան, քարսիրտ անձ: *Mr Smith has a heart of stone. He whipped his horse until it fell down* [25, 374]. **A bad/poor/no hand at/with sth** - Անճար, անճորձ, անընդունակ: *I am always a bad hand at hiding my feelings* [25, 346]. **With a high hand** - Դաժան, կեղեքող: *She was carrying things with too high a hand* [26, 267]. **Not to be able to see beyond one's nose** - Շատ սահմանափակ, անհեռառես լինել: **Have an oily/smooth tongue** - Շողոքորթ լինել: **Go in at one ear and out at the other** - Մոռացկոտ լինել: *The information went in one ear of Lola and out the other* [26, 439]: **Let the grass grow under one's feet** - Ոչ գործունյա, դանդաղաշարժ: *In the words of the proverb, I was resolved not to let the grass grow under my feet* [27, 459]. **Have sticky fingers** - Ձեռքը մաքուր չէ, գող է: **Not to be worth sb's little finger** - Անարժան լինել: *All the other women in the world aren't worth your little finger* [25, 276]. **Have (got) water on the brain** - Անուղեղ, հիմար լինել: **Hairy about the heel** - Անդաստիարակ: **A man of blood and iron** - Դաժան, անգութ մարդ:

Մարդու բացասական հատկանիշներ արտահայտող իմաստային այս դաշտում տեղ են գտել նաև մի շարք այլ դարձվածքներ՝ **սուտը բերնի մեջ լողալ** (գռիկբ. սուտասան, ստախոս լինել), **գլուխը դդում** (հիմար, ապուշ), **գլխում մի այբ չկա** (անգրագետ է, տգետ, գրեկարդալ չգիտի), **մի աչքով լալ, մյուսով ծիծաղել** (թեթևամիտ, թեթևասովիկ լինել, խորը չգգալ), **աչքը գերեզմանը կշտացնի** (գռիկ., շատ ագահ, անհագ), **կատվի աչքերը փակող** (ժլատ, կծծի, անհյուրասեր), **Աստծո գդակը ձեռքն ընկնի՝ կգողանա** (գող, որը ոչինչ, ոչ ոքի չի խնայում), **ձեռքը պետք է թեշիկ տալ** (տղամարդ չլինել, վախկոտ լինել), **երեսը բրդի ջրով լվացած** (անպատկառ, կտի), **երեսը շան կաշի** (անամոթ, պնդերես), **Աստծո երեսից ընկած** (չար, անպետք մարդ, որից Աստված երես է թեքել), **երեսից (երեսանց) հայելի՝ տակից/տականց ածելի**

(այն չէ, ինչ ցույց է տալիս), **երեսի կաշին հաստ** (ինքնասիրություն չունեցող, անամոթ), **երեսի քուրը գնալ** (անամոթ, անպատկառ դառնալ), **երեսը գոմշի կաշի շինել/դարձնել** (երեսը պնդացնել, չամաչել), **երես տվինք՝ աստառ ուզեց** (լկտիացավ, անամոթ դարձավ), **երեսի աբուռը գնալ** (անամոթանալ), **թքում են երեսին, ասում է անձրև է գալիս** (անամոթ է), **ձողի ծայրով վարդը քթին չհասնի** (շատ հպարտ, ինքնահավան լինել), **քիթը երկար** (գոռոզ, մեծամիտ մարդ), **քթից ընկնողը հազար կտոր կլինի** (շատ գոռոզ է մեծամիտ, ամբարտավան), **լեզուն բոյ քաշել** (պոռոտախոս, մեծախոս լինել), **ոտքը շատ բարձր դնել** (գոռոզանալ, մեծամտանալ), **գայլը գառան մորթու մեջ** (այն չէ, ինչ երևում է), **ճակատ ունի հա՛** (շատ անամոթ է), **կզակը թույլ** (շատախոս), **երակ ունենալ** (մի ծալքը պակաս), **փորի որդերը խաղալ** (նախանձել), **բթացած ուղեղ** (անհասկացող, անխելք, հիմար), **փորում(ը) սատանա լինել** (չար, խորամանկ մտադրություն ունենալ), **փորի գերի** (որկրամոլ), **без головы** (բույթ, հիմար), **шальная голова** (խելացնոր անձ), **голова два уха** (դանդաղաշարժ, հիմար մարդ), **глаза завидующие, руки загребущие** (ազահ մարդիկ երկար ձեռքեր են ունենում), **задирать нос** (մեծամտանալ, ամբարտավան դառնալ), **дерзкий на язык** (տուր, ամբարտավան պատասխան տվող, խոսող), **ухо парень/ухо девка** (ճաչպիկ, խարդախ աղջիկ, տղա), **войти в одно ухо и выйти в другое** (մոռացկոտ լինել), **волк в овечьем шкуре** (այն չէ, ինչ երևում է), **волос долог, да ум короток** (մազը երկար, խելքը՝ կարճ), **have a head like a sieve** (ցրված, մոռացկոտ մարդ լինել), **folly is wise in her own eyes** (ասացվ., ամեն հիմար խելք է իր աչքում), **an/the iron fist/hand in a/the velvet glove** (մեղմությամբ քղարկված դաժանություն, խստություն), **show a false face** (կեղծավոր լինել), **let him put in his finger and he'll put in his whole hand** (երես տվինք՝ աստառ ուզեց), **spit in his face, and he'll say it's raining** (երեսին թքում ես, ասում է անձրև է գալիս), **a honey tongue, a heart of gall** (ասացվ., լեզուն մեղր, սիրտը սառույց), **all asses wag their ears** (հիմարներին հատուկ է խոր մտքեր արտահայտել), **an ass in a lion's skin** (այն չէ ինչ երևում է), **lily/white liver** (վախկոտություն, փոքրոգություն), **dead from the neck up** (հիմար), **have more brains in one's little finger than one has in his whole body** (ասացվ., շատ քիչ խելք ունենալ), **a high stomach** (մեծամտություն), **what is bred in the bone will not come/go out of the flesh** (սևին սապոնն ինչ կանի, խևին՝ խրատը) և այլն:

Ինչպես ցույց է տալիս դիտարկված դարձվածքների ուսումնասիրությունը, ըստ բաղադրիչների իմաստային միաձուլության աստիճանի դարձվածքները պատկանում են դարձվածքային սերտաճումների և միասնությունների թվին, ո-

րոնց բաղադրիչներն անօտարելի են: Միավորները մեծ մասամբ մենիմաստ են: Բազմիմաստ միավորները բերվել են միայն այս դաշտին վերաբերող իմաստներով:

Մարդու բացասական հատկանիշներ արտահայտող դարձվածքներ առկա են դիտարկվող երեք լեզուներում: Ընդ որում, հայերենի դաշտն ամենածավալունն ու ամենահարուստն է թե՛ միավորների արտահայտած իմաստներով և նրբիմաստներով, թե՛ կառուցվածքային ու քերականական և թե՛ ոճական առանձնահատկություններով: Արտահայտված հատկանիշներն այնքան շատ և այնքան բազմազան են, որ դրանք բոլորը նշելն անհնարին է, ուստի և բերվել են դրանցից մի քանիսը: Այսպես, օրինակ՝ հիմարության, գոռոզության, անազնվության, ագահության, անգթության ու դաժանության, չարության, անամոթության, պոռոտախոսության, աներեսության, շատախոսության հատկանիշներն առկա են բոլոր երեք լեզուներում: Թուլամտության, վախկոտության, գող լինելու հատկանիշները նկատվում են հայերենում և անգլերենում, լպիրշության, սանձարձակության, անդաստիարակության, կեղծավորության, ոկրամոլության հատկանիշները՝ նույնպես հայերենում և անգլերենում: Նախանձի, խիստ բժախնդրության, ստախոսության, խորամանկության հատկանիշներն առկա են հայերենում, անշնորհքության, համառության հատկանիշները՝ ռուսերենում, շողքորթ և դանդաղաշարժ լինելու հատկանիշները՝ անգլերենում և այլն:

Դարձվածքների գլխավոր անդամն իմաստային առումով մարմնի մասի անվանումն է, որ չի կարող օտարվել: Շարահյուսական առումով դարձվածքների գլխավոր անդամը կախված է վերջինիս կառուցվածքային տիպից: Դարձվածքների բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են ըստ դիտարկվող լեզուների տիպաբանական առանձնահատկությունների՝ հայերենում՝ հոլովական վերջավորություններով, անգլերենում՝ նախդիրներով, իսկ ռուսերենում՝ թե՛ առաջին, թե երկրորդ ձևերով: Դիտարկված դարձվածքները պատկանում են կառուցվածքային տարբեր տիպերի: Դրանց շարքում հանդիպում են անվանական և բայական երկանդամ, եռանդամ, բազմանդամ միավորներ: Այս դաշտը շատ հարուստ է նաև հաղորդակցական դարձվածքներով՝ ասացվածքներով (բոլոր լեզուներում):

Դարձվածքներում գործում են քերականական տարբեր կարգեր, որոնցից մի մասն ունի իմաստազատիչ դեր, մյուսներն օժտված չեն նման դերով:

Բոլոր երեք լեզուներում հանդիպում են բառային, բայական, քանակական տարբերակներ: Ահա մի քանիսը. **Գլխում խելքի կտոր չլինել/չունենալ, աչքի սուրմա/ծարիր թոցնող, երեսի մեռոնը գնալ/թափվել, пустая голова/башка, мизинца/ногтя не стоит, a bad/poor /no hand at sth, have an oily/smooth tongue.**

Դիտարկված դաշտում միևնույն հատկանիշն արտահայտող դարձվածքներն իրար հետ կազմում են հոմանշային շարքեր. **Բերանից խուլ – գլուխը դատարկ – գլխում խելքի կտոր չլինել – գլուխը դդում, գլխում մի այբ չլինել, գլխին նստել – երես առնել – երեսը պատռած, աչքի ծարիր թոցնող – ձեռքից քաշ – աստծո գդակը ձեռքը ընկնի՝ կգողանա, աչքը ծակ – անտակ փոր – փորի գերի, չար աչք – սիրտը չար – լեզվի տակ օձի թույն լինել, սիրտը քարանալ – սիրտը ժանտ – սիրտը կոտրել, քիթը բարձր – քիթը երկար, ձեռքը գոց/հուպ – ոսկոր մտոլ – կատվի աչքերը փակող, пустая голова – два уха -мозги не варят, у него нет сердца – with a high hand, длинный язык – слаб на язык, поднимать нос – задирать нос, fat head – an empty head – soft in the head – a wooden head, have water on the brain, a wicked heart – a black heart, turn one’s nose up at – a high stomach, a heart of stone – a hard heart – with a high hand.**

Ուսումնասիրված դարձվածքների շարքում, բնական է, որ չկան հականիշ դարձվածքներ, սակայն հայերենում նկատվում են այնպիսիք, որ արտահայտում են հակադիր իմաստներ: Սա կարծում ենք, արդյունք է դարձվածքների բայ-բաղադրիչների սեռիմաստային առանձնահատկությունների, օրինակ՝ **երես/առնել/տալ, լպիրշ լինելու և լպիրշացնելու, անդաստիարակ դարձնելու** իմաստներ:

Ոճական առումով դարձվածքները հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում: Հայերենում հանդիպում են նաև բարբառներում գործածվող, օրինակ՝ **բերանից խուլ**, (հեզն.) **ինչ որ քո ոտը գիտե, այն մեր գլուխը չգիտե**, (գռիկ.)՝ **տափակ գլուխ, շան երես ունենալ** և այլն: Նկատելի՝ նաև, որ ուսումնասիրված դարձվածքներով բավական հարուստ է նաև գեղարվեստական գրականությունը:

Կան նաև այնպիսի դարձվածքներ, որոնց արտահայտած իմաստը կարող է կախված լինել համատեքստից՝ **բերանից կաթի հոտ գալ, неопытная рука, a fresh hand**. Մեծ թիվ են կազմում ասացվածքները. **Թքում են երեսին, ասում է անձրև է գալիս, երեսից հայելի՝ տակից ածելի, երես տվինք աստառ ուզեց, what is bred in the bone will, not come/go out of the flesh, կարմիր կովը կաշին չի փոխի, սևին սապոնն ինչ կանի, խևին խրատը, folly is wise in her own eyes, волос долог, да ум короток, a honey tanguer a heart of gall** և այլն:

Ինչպես նկատում ենք, դիտարկված դարձվածքների մեծ մասն օգտագործվում է միայն այս կամ այն լեզվում, ասել է թե՛ դրանք ունեն ազգային բնույթ, հատուկ են միայն տվյալ լեզվով խոսող ժողովրդի լեզվամտածողությանը, օրինակ՝ **երեսը բրդի ջրով լվացած, բերանից խուլ, աչքի ծարիր թոցնող, ծուռ քիթ**,

էշի ականջին քնած, сердце обросло мохом, голова-два уха, ухо-парень, ухо девка, без царя в голове, a nose of wax, all asses wag their ears, dead from the neck on և այլն: Սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որ ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ երկու լեզվում՝ **փորի գերի – be given to one’s belly, քիթը տնկել – задирать нос, սիրտը ժանտ – черное сердце – a wicked heart, սար ու ձոր տերտերի փոր – a priest’s belly is like hill and valley, աչքերում ամոթ չլինել – нет стыда в глазах, գլուխը դարմանով լիքը – голова соломой набита, неопытная рука – a poor hand, ձեռքից քաշ – на руку нечист – have sticky fingers** և այլն: Այս համարժեքներից մի քանիսը պատճենումներ են: Սակայն մի՞շտ են արդյոք դրանք պատճենման արդյունք, թե որոշ դեպքերում պարզապես գործ ունենք տարբեր ժողովուրդների լեզուներում անկախաբար առաջացած համարժեք դարձվածքների կամ պատահական համընկնումների հետ: Մի՞թե տարբեր ժողովուրդներ չէին կարող նույն դիտարկումը կատարել և հանգելով նույնանման եզրակացության կազմել մարդու բացասական հատկանիշներ արտահայտող նույնիմաստ դարձվածքներ, նույնիսկ կառուցվածքային և նրբիմաստային տարբերություններով: Իհարկե կարող էին: Այս հանգամանքը վկայում է տարբեր ժողովուրդների լեզվամտածողության մեջ գոյություն ունեցող անառարկելի ընդհանրությունների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բաղիկյան Խ.** Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները.- Ե., 1986, 354 էջ:
2. **Вердиева З.Н.** Семантические поля в современном английском языке.- М., 1986. С. 4-12.
3. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան.- Երևանի համալս. հրատ., 1975:
4. **Օտյան Ե.** Երկերի ժողովածու.- Ե., 1935:
5. **Թումանյան Հովհ.** Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4,5,3.- Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1990-1996:
6. **Րաֆֆի,** Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 3.- Ե., 1983-1984:
7. **Խանզադյան Ս.** Հողը.- Ե., 1964:
8. **Ջարյան Ն.,** Հացավան.- Ե., 1947:
9. **Շիրվանզադե Ա.** Երկերի լիակատար ժողովածու, հ. 4.- Երևան, Պետ հրատ., 1930:
10. **Դեմիրճյան Դ.** Վարդանանք.- Երևան, 1987:
11. **Պռոշյան Պ.** Հացի խնդիր.- Երևան, Հայաստան հրատ., 1968:
12. **Սևակ Պ.** Երկերի ժողովածու 6 հատորով, հ.1.- Ե., 1972-73:
13. **Աղայան Ղ.** Երկեր.- Երևան, «Սովետ. գրող» հրատ., 1979:
14. **Իսահակյան Ա.,** Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 1.- Երևան, Հայաստան հրատ., 1973-1979:

15. Մաթևոսյան Հ. Վիպակներ.-Ե., 1990:
16. Բակունց Ա. Երկեր.-«Սովետ. Գրող» հրատ., 1986:
17. Աբովյան Խ. Վերք Հայաստանի.- Ե., 1975:
18. Пушкин А.С. Поэмы, худ. лит. - М., 1982.
19. Гоголь Н.В. Пьесы. -М., 1983.
20. Квеселевич Д.И. Русско-английский фразеологический словарь. -М., 1998.
21. Пушкин А.С. Драматические произведения, проза. -М., 1982.
22. Куприн А.И. Сочинения в 2-х томах. Т.1. -М., 1981.
23. Twain M. The Adventures of Tom Sawyer, - "FL Publ. House", М., 1948.
24. Cronin A.J. Hatter's Castle.- "FL. Publ. House" М., 1963.
25. Kunin A.V. English-Russian phraseological dictionary. -М., 1982.
26. Dreiser Th. Sister Carrie.- М., 1968.
27. Collins W. The Woman in White.- USA, 1934.

Ա.Յ. ԿԱԶԱՐՅԱՆ

ФРАЗЕОЛОГИЗМЫ, ВЫРАЖАЮЩИЕ ОТРИЦАТЕЛЬНЫЕ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА НА АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

Рассматриваются и сопоставляются особенности армянских, русских и английских фразеологизмов, выражающих отрицательные качества человека. Выявляются общности и различия указанных особенностей, которые свидетельствуют об общностях и различиях языкового мышления народов, говорящих на данных языках.

Ключевые слова: фразеологизм, отрицательное качество, особенность, языковое мышление.

H.Z. GAZARYAN

PHRASEOLOGICAL UNITS EXPRESSING THE NEGATIVE QUALITIES OF A PERSON IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

The peculiarities of the Armenian, Russian and English phraseological units expressing the negative qualities of a person are considered and contrasted, the similarities and differences of the mentioned units are revealed which speak about the similarities and differences of the linguistic thinking of the peoples speaking the given languages.

Keywords: phraseological unit, negative qualities, peculiarities, linguistic thinking.